



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.


պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

16567



1907



№ 41

Գրադարան «ՅԱԴՎԱՀԱՆ»

26 SEP 2006  
№ 41

323-1

9-84

15 JAN 2010

Յ. ԿՈՐՅԵՒ

ԻՆՉՊԵՍ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼ ԱԶԳՈՒԹԻՒՆՆԵՐԻ

## ՀԱԽԱՍՏԱՐՈՒԹԻՒՆԸ

Թարգմանութիւն սուսերէնից

ԲԱԳՈՒ

ՏՊԱՐԱՆ Ն. ԵՐԵՒԱՆՑԵԱՆԻ

1907 թ.

16567

24.03.2013

ՀԱՅԱՍՏԱՆԻ  
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՎՐԱՅԻ ԳՐԱԴԱՐԱՆ



61413-62

ԽՆ2ՊԷՄ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼ ԱԶԳՈՒԹԻՒՆԵՐԻ  
ՀԱԻԱՍՏԱՐՈՒԹԻՒՆԸ

I

Յեղափոխութեան դէմ կռւելու համար կառավարութիւնը ոչ  
մի միջոցի առաջ կանգ չի առնում: Որպէսզի բաժանի իր թշնա-  
միներին նա ամեն կերպ աշխատում է զարթեցնել և վառել ազգ-  
այլն ատելութիւն: Այն թշնամիները, որոնց բանակում համերաշ-  
խութիւն չը կայ, այնքան էլ վտանգաւոր չեն: Այդ պատճառով  
կառավարութեան ազենտները, դեռ Պլեէի տիրապետութեան ժա-  
մանակ, աշխատումէին համոզել ոռւս ժողովրդին, որ ազատու-  
թեան ձգտում են ոչ թէ Ռուսաստանի ամբողջ աշխատաւոր ժո-  
ղովուրդը և լուսաւոր ինտելիգենցիան, այլ միմիայն օտարազ-  
գիները: Այդ ազենտները համոզում էին, որ յուզվում են հրէանե-  
րը, որոնք ցանկանում են ոչնչացնել կառավարութեան ուժը,  
ձգել այդ ուժը իրանց ձեռքը և տիրել ոռւս ժողովրդի վրայ,  
որ կեները, վրացիները և Հայերը ցանկանում են բաժանել Ռու-  
սաստանից և իրանց սեփական թագաւորութիւնը հիմնել: Այդ ձեկի  
պրօպագանդան հող էր գտնում խաւար մասսաների մէջ: Ոչ ա-  
ռանց գիտութեան, և նոյն իսկ, Պլեէի գաղտնի աջակցութեամբ  
էին կազմակերպւած կիշենսկի և Հոմելի հրէական ջարդերը: Շու-  
տով ջարդեր առաջ եկան և ուրիշ տեղեր, իսկ ներկայումս ջար-

գերը դարձել են սովորական երևոյթ ուսւ իրականութեան մէջ: Կովկասում հայերի և թուրքերի թշնամութիւնը, սր պրօվոկատօրութեամբ սերմանում էր ոստիկանութիւնը, ընդունել է զարհուրելի չափեր. ահա արդէն երկու տարի է, որ քիչ ընդմիջումներով անխնայ կոտորածներ են տեղի ունենում այդ երկու թշնամացած ազգութիւնների միջև: Իսքնակալ կառավարութիւնը, իհարկէ, առանց նպատակի չառաջացրեց այդ թշնամութիւնը: Քիւրօկրատիայի դէմ յաջող կուելու համար, բոլոր ազգութիւնների յեղափոխականները պէտքէ միանան մի յեղափոխական բանակում: Այդ միացումը խանգարելու համար, բիւրօկրատիան ցանում է ատելութիւնազգութիւնների մէջ: Եւ որովհետև (ինքնակալ—ոստիկանական բեժիմի գոյութեան շնորհիւ) Ռուսաստանում դեռ շատ կան տղէտ և մութը անձնաւորութիւններ, կառավարութեան այդպիսի ձեռնակները մասամբ իրականանում էին:

Իրերի այզպիսի զրութիւնը բարդացնում է, առանց այն էլ ազգային կնճոստ հարցը: Նա բարդ է այն պատճառով, որ յաճախ տիրող դասակարգերը իրանց սեփական դասակարգային շահերը ներկայացնում են, որպէս ազգային: Եւ զրա համար ազգային ծրագիր մշակելուց առաջ սլէտքէ լաւ ըմբռնել այդ հարցը: Նորա բովանդակութիւնից պէտք է հեռացնել նորա հետ ապօրէն կերպով խառնւած բուրժուական—դասակարգային ազգայնութիւնը, և քննադատութեան ենթարկելով բուրժուազիայի առաջարած ազգային հարցը, որոշել թէ ինչպէս պէտքէ լուծի այդ խընդիրը աշխատաւոր ժողովուրդը:

Յետքէմ բուրժուազիան լսել անգամ չի ցանկանում ազգերի հաւասարութեան մասին, իսկ ազգատամիտը հաւատացնում է, որ ոչ մի անձրաժեշտութիւն չը կայ այժմ անմիջապէս մշակելու ծրագիր ազգայինարցի մասին. երբ Ռուսաստանում կը տապարեն բիւրօկրատական կարգերը և կը թագաւորէ քաղաքացիական ազատութիւն, այն ժամանակ ազգային հարցը ճշմարիտ լուծուց կստանայ: Այդ տեսակէտի կողմանկիցները լսել անգամ չեն ցանկանում շրջանային (օբլատոյ) և ազգային աւտօնօմիայի մասին: Սակայն բոլոր բուրժուազիան ամբողջապէս վերացրած միաւտեսակ չի նայում ազգային հարցին: Եթէ տիրող ազգութեան, խոշոր և մասր բուրժուազիան համակաւած է համազգայնական (պահանջոնալիստսկի), օրինակ մեզնում ուսւացնող տեսդենցիաներ,

ով և Բշնամաբար դիմապրում է հպատակ ազգութիւնների աւտօնօմիական և դաշնակցական (ֆեւերատիւ) ձգտումներին, իսկ հպատակ ազգութիւնների խոշոր բուրժուազիան ցանկանալով շուտով միանալ կապիտալիստական շահագործման բարիքներին, (գասակարգային պէտութեան բարեհաճ մասնակցութեամբ) հեշտութեամբ իւրացնում է իր նոր հայրենիքի «հայրենասիրութիւնը», զրա հակառակ ձնշւած ազգութիւնների մասր բուրժուազիան միշտ տարւած է նեղ ազգայնութեամբ: Ռուսական խոշոր բուժուազիան ձգտում է տիրապետել ներքին բոլոր շուկաներին. նա չունի արտաքին շուկաներ, որովհետև Ռուսաստանը ուրիշ երկիրներից տեղի ուշ մտաւ կապիտալիստական զարգացման ուղղին: Դրաի շուկաների գրաւման մասին նա չէր կարւզ մտածել: Ո՞վ էր Ռուսաստանից գուրս ուսւական ապրանքի գնողը, քանի որ Արևմտեան եւրոպայի ապրանքները գերադասելի են թէ արժողութեամբ և թէ յատկութեամբ: Այդ պատճառով խոշոր բուրժուազիան ցանկանում է տիրել գոնէ, ամբողջ ներքին շուկային: Շուկային տիրելու այդ ձգտման ժամանակ նա ցանկանում է ոչնչացնել իր ճանապարհին եղած բոլոր խոչնդուները: Այդ խոչնդուներից մէկը պէտք է ընդունել պէտութեան մէջ գոյութիւն ունեցող տարբեր ազգութիւնները, իրանց տարբեր լեզուներով: Օտար ազգութիւնների և լեզուների գոյութիւնը ստեղծում է պէտութեան մէջ ազգային շուկաներ, որոնք խանգարում են ապրանքների ազատ շրջանառութեան: Շրջանների և ազգութիւնների աւտօնօմիան աւելի ևս կամրապնդի այդ շուկաները և այդ պատճառով խոշոր բուրժուազիան կուռում է այդ աւտօնօմիայի դէմ: Նա պաշտպանում է ազգութիւններին ձուլող քաղաքականութիւնը այն յուսով, որ կը յարդի լեզուների տարբերութիւնը և կը ոչնչանան ազգային շուկաները. նոյս տեղը կը կազմէի մի ընդհանուր շուկայ ուր կը արել խոշոր բուրժուազիան:

Եթէ տիրող խոշոր բուրժուազիայի դասակարգային շահերը պահանջում են պաշտպանել Ռուսաստանում ապրող փոքրիկ ազգութիւններին բոնի ձուլելու քաղաքականութիւնը, բայց սակայն մասր բուրժուազիան, որի գոյութիւնը կախւած է տեղական ազգային շուկաներից, հետեւում է միանգամայն հակառակ քաղաքականութեան: Նա չի կարող ներքին շուկաներում մրցել խոշոր բուրժուազիայի հետ, և այդ պատճառով իր ամբողջ ջանքերով աշ-

խատում է պահել և ամրապնդել իր համար տեղական ազգային շուկան: Խոշոր տիրապետող բուրժուազիան իր հայրենի ռուսական արդիւնագործութիւնը էժանագին և որակով բարձր օտար ապրանքների ներմուծումից պաշտպանում է ծանր մաքսային հարկերով: Մանր բուրժուազիան նոյն բանին է ձգտում: Նա ցանկանում է առանձնացնել շրջանները, շրջապատել նոցա մաքսատներով և այդպիսով պահպանել իր համար տեղական շուկան: Դրանով է բաշխագրում այն փաստը, որ ճնշւած ագգութիւնների մասը բուրժուազիան միշտ պատրաստ է պաշտպանել ոչ միայն շրջանային (օնակտե) ստուգոմիայի պահանջը, այլ և ամենածայրահեղ ազգայինական ձգտումները, մինչև իսկ անջատումն (սեպարատիզմ): Այդ մտքի ճշմարտութիւնը կարելի է ապացուցել բազմաթիւ օրինակներով: Շեղվիզը քանի որ պատկանում էր գանիացիաներին, գերմանական բուրժուազիան կուտում էր գանիացիների դէմ, իբր թէ գերմանացիներին պաշտպանելու և ազգերի հաւասարութեան համար: Իսկ հիմա երբ այդ գաւառը անցել է գերմանացիներին, նոյն այդ բուրժուազիան ճնշում է գանիացիներին: Աւստրիայում զանազան ազգութիւններ իրանց բուրժուազիայի առաջնորդութեամբ, կուտում են իրանց ազգային ազատութեան համար, և մինոյն ժամանակ իրանց երկրում նեղում են իրանցից աւելի թոյլ ազգերին: Նոյն պատկերն է նկատում նաև մեզ մօտ Ռուսաստնում: Լեհական խոշոր բուրժուազիան (օրին, Լօձի կապիտալիստները), որ մատակարարում է ազրանք, համարեա ամբողջ Ռուսաստանին և կարող է ներքին շուկայում մրցել միւս ազգութիւնների խոշոր կապիտալիստների հետ, չի ձգտում աւմենաին լեհական անկախութեան: Դրա հակառակ լեհական մանր բուրժուազիան, որը կախւած է լեհական տեղական շուկայից, ձգտում է ռուսաստանից բաժանման, ոչ նորա համար, ինարկէ, որ իրականացնի լեհաստանում ազգութիւնների հաւասարութիւնը, այլ որ հեղտութեամբ իր հայրենիքում ճնշի օտար աղքութիւններին և շահագործի բանուոր գասակարգին: Այդպիսով խոշոր և մանր բուրժուազիայի դասակարգային շահերը ստիպում են առաջինին ձգտել տիրաետութեան ամբողջ պետութեան մէջ (դրա համար նա պաշտպանում է բռնի ձուլում), իսկ երկրորդի կողմից տիրապետութեան ձգտումն իր տերրիտորիայում (այդ պատ-

ճառով նա պաշտպանում է ամենածայրահեղ ազգայնական պահանջները):

Պարզ է այդպիսով, որ ազգային յարձակողական կամ պաշտպանողական իդէօլոգիայի քողի տակ բուրժուազիան իրականապէս հետեւում է իր նեղ եսական շահերին: Բուրժուազիայի դէմ կուելիս աշխատաւոր մասսաները պէտք է գիտակցեն իրանց դասակարգային շահերը և գրանց համապատասխան մշակեն իրանց ազգային ծրագիրը, որը տրամարանորէն պէտք է բղիքի աշխատաւորական աշխարհայեցքի հիմնական կէտերից: Աշխատաւոր գասի շահերը պաշտպանում են սօցիալիստները և հետեւապէս ոչ մի սօցիալիստական կուսակցութիւն չի կարող աչքաթող անել ազգային հարցը, այլ պարտաւոր է գտնել նորա համար այնպիսի լուծումն, որը համապատասխանէր սօցիալիզմի գաղափարին և բանուոր գասակարգի շահերին: Յետագայ դատողութիւններից մենք կը տեսնենք, որ աշխատաւոր ժողովրդի շահերը պահանջում են ազգութիւնների հաւասարութեան իրականացումը:

Ամբողջ երկրագնդի վրայ չի կարելի գտնել բանուրների մի այնպիսի խմբակ, որ իրան մի որեւէ ազգի մասնիկը չը համարէր: Մինչև անգամ այնպիսի զարգացած պրոլետարիատ, որպիսին է գերմանականը, զուրկ չէ հայրենասիրական զգացմունքից: Բանւոր դասակարգը ամենից առաջ կուտում է, ինարկէ, իր դասակարգային կարիքների բաւարարութեան համար, բայց մինոյն ժամանակ նա չի մոռանում, որ ինքը կազմում է այն ազգի մի մասը, որի հետ նա կապւած է լեղուվ, սովորութիւններով և կուլտուրայով, և եթէ նորա ազգութեան սպանում է որ և է վտանգ, նա պատրաստ է վեր կենալ նորան պաշտպանելու: Եւ այդ սէրը դէպի իւր ազգը այնքան ուժեղ է և բնական, որ յաճախ բանուոր դասակարգը իւր ազգի ազգատութեան համար կուելիս մոռանում է, որ իւր ազգի մէջ նա ունի «սերբին» թշնամի—բուրժուազիա: Այդ գեռ քիչ է: Նա մինչև իսկ տրամադիր է լինում միանլու այդ թշնամու հետ և մոռանալով դասակարգային հակասութիւնը, բուրժուազիայի հետ միասին կուել իր ազգի ազատութեան համար:

Բանուրական մասսաների գասակարգային գիտակցութեան այսօրինակ մթնացումը, ինարկէ, ձեռնտու է բուրժուազիային: Դա նորան օգտաւէտ է, որովհետեւ քանի աւելի է բանուորի գիտակ-

յութիւնը հեռանում իր դասակարգային շահերից դէպի ազգային կրիւլ, այնքան աւելի հեշտ նորան կարելի է շահագործել: Բուրժուազիան բարեկամարար առաջարկում է իր ձեռքը բանութիւնը, որովհետև մեր ազգի ամբողջութեան վտանգ է սպառնում: Միանանք և միասին կռւենք մեզ ճնշողների դէմ: Երբ ձեռք կը բերենք ազգային պատութիւն, այն ժամանակ կարող ենք նորից յիշել մեր ընտանեկան գործերը (այսինքն դասակարգային հասարակութիւնները): Եւ շահ յաճախ, սօցիալիստական տեսակետից այդպիսի սպանիչ մտքերի պրօպագանդան հաւանութիւն է գլուխում ճնշւած ազգութիւնների բանուրական մասսաների մէջ: Հայրանոր դասակարգը բաւական հաշտ է ապրում հայ կապիտալիստների հետ հայերի մէջ մէնք չենք տեսնում դասակարգային կռւի ուժեղ զարգացում:

Երբ ցարի կառավարութիւնը խլեց հայերից եկեղեցական կալւածները, այն ժամանակ հայ բուրժուազիան և աշխատաւոր ժողովուրդը միացած կռւում էին կառավարութեան դէմ: Եւ այն ժամանակից մինչեւ այժմ չի զարգացել դասակարգային կրիւլ հայերի մէջ, և դեռ մինչեւ այժմ հայ բուրժուազիան ու բուրժուական կռւսակցութիւնները յաջողութեամբ առաջ են տանում ազգային պրօպագանդան մթնացներով հայ բանոր դասի դասակարգային գիտակցութիւնը \*):

Սօցիալիստական կռւսակցութիւնը ցանկանում է միացնել զանազան ազգութիւնների բանոր ժողովրդին մի ընդհանուր դասակարգային բանակում: առանց այդ միութեան սօցիալիզմի երեք չի յաղթանակի: Բայց այն երկրներում, որտեղ մի ազգութիւն տիրում է միւնքների վերայ և ճնշում է նոցա, բոլոր ազգութիւնների բանուրների միացումը, համարեա, անհնար է որովհետեւ ճնշւած ազգութիւնների աշխատաւոր դասակարգերը մշտապէս կապստամբեն ճնշողների դէմ և կը կռւեն յանուն իրանց ազգի ազատութեան: այդպիսով բանուրները չեն կարող ամբողջապէս նւիրել դասակարգային կռւին: Այն ժամանակ միայն աշխատա-

\*) Մանօթ. դասակարգային համերաշխատթեան այդ արամազբութիւնն աւելի ևս ուժեղացաւ հայ թուրքական ընդհարութների ժամանակ, երբ վտանգւած էր ամբողջ ազգի գոյութիւնը:

որ ժողովուրդը կարող է յաջող կռւել բուրժուազիայի դէմ, երբ դասակարգային կրիւլ ոչնչով չի բարդանայ: Զանազան ազգութիւնների բանուրները միայն այն դէպքում կը միանան և կը դասնան մի հզօր սօցիալիստական բանակ, երբ բոլոր ազգութիւնները կը լինեն հաւասար: Դրանով էլ պէտք է զեկավարուի սօցիալիստական կռւսակցութիւնը իր ազգային ծրագիրը մշակելիս: Նա պէտք է ոչնչացնի և թաղի ազգային հարցը, որպէսզի բանուրները չը հեռանան իրանց բուն նպատակից—սօցիալիստական կռւից: Իսկ թաղել այդ հարցը կարելի է միայն այն ժամանակ, երբ կիրականանայ ազգութիւնների խսկական հաւասարութիւնը: Այդ պատճառով սօցիալիստական կռւսակցութիւնը չը պէտք է բաւականանայ միմայն բարձր սկզբունքներ յայտարարելով, այլ և պարտաւոր է պարզ և որոշ ցոյց տալ այն միջոցները, որոնք կապահովեն ազգերի հաւասարութիւնը:

## II

Ռուսաստանում գործող բոլոր սօցիալիստական կռւսակցութիւնները սկզբունքով համաձայն են այն բանում, որ անհրաժեշտ է Ռուսաստանում իրականացնել ազգերի հաւասարութիւնը, որովհետև միայն այդ դէպքում հնարաւոր կը լինի ազատ ազգութիւնների ազատ բանուրներին միացնել մի բանակում:

Սակայն չը նայելով սկզբունքով բոլոր սօցիալիստական կռւսակցութիւնները դրա հետ համաձայն են, բայց նոցա ծրագիրներն այդ մասին շատ տարբեր են: Այդ դեռ քիչ է մէկն այդ կռւսակցութիւններից չունի և ոչ մի ծրագիր. ես ինկատի ունեմ սօցիեալ-դեմօկրատական բանուրական կռւսակցութիւնը: Իր երկրորդ համագումարում այդ կռւսակցութիւնը յայտարարեց, որ ինքը կողմանակից է բոլոր ազգութիւնների ազատ «ինքնորոշման» և դրանով հանգստացաւ: Բայց այդ ի՞նչ ինքնորոշումն է, քաղաքական է, թէ կռւլուրական և, որ գլխաւորն է, ի՞նչպէս պէտք է նորան իրականացնել կեանքում: ինքնորոշման համար իրաւունքի ի՞նչպիսի ատահովացում պէտք ստեղծել, այդ մասին սօցիալ-դեմօկրատական ծրագրում ոչ մի խօսք չէ ասուած: Երկրորդ համագումարից դէսը սօցիալ-դեմօկրատիան ժամանակ չունեցաւ լուծելու ազգային հարցը և այսպէս կռւող, Միացնող համագու-

մարը ուրիշ հարցերի մասին մի շարք որոշումներ համելով, ազգային հարցի լուծումը յետաձգեց «ժամանակի սույութեան պատճառով»:

Ինձ թւում է, որ այսպիսի անորոշ և մութ ծրագիրը, կամ աւելի լաւ է ասել ծրագրի բացակայութիւնը (որովհետեւ «ազգերի ինքնորոշում» մութ դարձածքը իրը ծրագիր ընդունել չի կարելի) մի կողմից բղխում է ազգային հարցը չը հասկանալուց, իսկ միւս կողմից աշխատաւոր ժողովրդի շահերի ոչ բաւարար խորն ըմբռնումից: Այդ բանում դժւար չի լինի համոզւել, եթէ յիշենք, թէ ինչ են ասում սօցիալ-դեմոկրատները իրանց այդ ծրագրի վերաբերմամբ: «Յար»-ի 4-րդ համարում կարդում ենք նոցա բացարձակ խոստովանութիւնը «Ռուսաստանում սօցիալ-դեմոկրատները դեռ կարող են հանգիստ կերպով յետաձգել ազգային հարցի մասին իրանց մանրամասն դեկլարացիան մշակելը և առժամանակ բաւականանալ կուսակցութեան մանիֆեստի սկզբանքային յայտարարութեամբ, որով կուսակցութիւնը ընդունում է ամեն ազգութեան համար ինքնորոշման իրաւունք: Այդ յայտարարութիւնը կատարեալ պարզութեամբ և որոշակի արտայայտում է ընդհանուր վերաբերմունքը դէպի Ռուսաստանի բոլոր ազգութիւնները և այդ կատարելապէս բաւական է»: Իսկ թէ ինչ է նշանակում սօցիալ-դեմոկրատների մօտ ինքնորոշումը բարը, այդ մենք իմանում ենք «Աւրա»-ի № 33-ից: «Պահանջել որ իւրաքանչիւր մի ազդ իրաւունք ունենայ ինքնավարութեան, նշանակում է միայն այն, որ մենք, իրեւ պրօլետարիատի կուսակցութիւն, ամեն տեղ և անպայման ազգի ինքնորոշման վրայ դրսից ուժով կամ անիրաւութեամբ ազգելու բոլոր փորձերին հակառակ պէտք է լինենք»: Զարմանալի ծրագիր է դա, որ յայտնում է թէ ինչի դէմ է ինքը լինելու: Մինչեւ այժմ մենք սովոր էինք տեսնել այնպիսի ծրագիր, որտեղ ասուում է թէ ինչի համար է կուելու կուսակցութիւնը: Եթէ մենք գիտենանք ի՞նչ է պահանջում կուսակցութիւնը, այն ժամանակ հասկանալի կը լինի. թէ ինչի դէմ նա կը գնայ և ինչ չի պաշտպանի: Զէ որ շատ տարօրինակ կը լինէր, եթէ սօցիալ-դեմոկր. կուսակցութիւնը յայտարարէր, որ ինքը հակառակ է բանւորների շահագործմանը կապիտալիստների ձեռքով և որ չի քաջալերելու այդ շահագործումը: Կուսակցութիւնը սակայն, ներկայ դէպում այդպիսի սիստ չի

գործում, նա առաջադրում է պարզ և որոշ պահանջ՝ 8 ժամւայրանորական օր, աշխատավարձի աւելացում, և այլն: Այդքան անգութ վերաբերեց Ռուսաստանի սօցիալ-դեմոկրատիան մի միայն դէպի ազգային հարցը:

Աւելի ևս հետաքրքիր է հնչում «ինքնորոշման իրաւունքը» երբ մենք նորա կողքին դնենք սօցիալ-դեմոկրատիայի կենդրունական օրդանի հետեւալ յայտարարութիւնը. «պրօլետարիատի դորձը չէ քարոզել ֆեղերացիա (դաշնակցութիւն) և ազգային աւտօնօմիա»:

Երկուսից մէկը, կամ ազգային շահերը բոլորովին օտար են բանւոր դասի շահերին, այն ժամանակ հարկաւոր չէ մշակնէ այդ մասին և ոչ մի ծրագիր. կամ թէ չէ, որի հետ համաձայն են և սօցիալ-դեմոկրատները, բանւոր դասի շահերը պահանջում են ազգային ճնշման ոչնչացումն և ազգութիւնների հաւասարութիւն. այդ դէպօւմ կուսակցութիւնը պարտաւոր է դնել ճշտգրիտ և որոշ ծրագրային պահանջներ, որոնք կապահովվէին ազգային հաւասարութիւնը. ճշմարիտ է. սօցիալ-դեմոկրատները մտցրել են իրանց ծրագրի մէջ պահանջ, որ ազգութիւններին իրաւունք տըրւի իրանց մայրենի լեզով կրթութիւն ստանալու, բայց և դա ել բոլորովին բաւարար լուծում չի տալիս այդ հիւանդ հարցին: Նախ, ով և ինչը պէտք է ատահովի այդ իրաւունքը: Զէ որ միայն պետութեան ընդունելը բաւական չէ. անհրաժեշտ է ցոյլ տալ այն գրաւականները, որոնք կապահովեն այդ իրաւունքի իրականացումը կեանքի մէջ:

Լեզուների ազատութեան մասին խօսում է նաև 1867 թւի դեկտեմբերի 21-ի Աւստրիական սահմանադրութիւնը, բայց ո՞ր երկրում փոքր ազգութիւններն աւելի են ճնշած քան Աւստրիայում: Եւ այդ օրինակը շատ պարզ ապացուցում է, որ բաւական չէ միայն յայտարարել ազգերի հաւասարութեան սկզբունքը, այլ անհրաժեշտ է որոշ և պարզ ցոյց տալ այն միջոցները, որոնցով կապահովի այդ հաւասարութիւնը: Սօցիալ-դեմոկրատների թէ ծրագրում և թէ գրականութեան մէջ այդ գրաւականների մասին ակնարկ անգամ չը կայ:

Անհական սօցիալիստական կուսակցութիւնն այդ գարանտիան գտնում է լայն ըրջանային աւտօնօմիայի մէջ: Դեռ նոր էր որ այդ կուսակցութիւնը ձգտում էր բաժանել Անհականը Ռուս-

սաստանից, և այդ ձգտումը դատապարտելի չէր: Դեմոկրատիկական ըէֆօրմների համար Լեհաստանը վաղուց է հասունացել. եթէ նա ազատ և անկախ լինէր, լեհական սօցիալիտները ձեռք բերած կը լինէին իրանց ծրագրի նւազագոյն պահանջները: Բայց Լեհաստանը հեծում էր ոռւս բիւրօկրատիայի լծի տակ, ոչ մի ընթացիկ մասին, որոնք անհրաժեշտ են դասակարգային կոիւ և ազատ կերպով դարգանալու համար չէր էլ կարելի մտածել. և այդ պատճառով լինացի սօցիալիստները ցանկանում էին բաժանել Ռուսաստանից, որպէսզի ազատ երկրում վճռական կոիւ սկսէին շահագործող դասի դէմ յանուն սօցիալիզմի: Բայց հանգամանքները փոխւեցին: Հոկտեմբերի 17-ին յեղափոխութիւնը առաջին յաղթանակը տարաւ, կասկած չը կայ և յետագայ յաղթանակների մասին. կասկած չը կայ որ աշխատաւոր ժողովրդի արինով շաղախւած երկրի համար շուտով գալու են լաւ օրեր: Կառավարութեան խոստումները սօցիալիստների աշջում չեն կարող՝ ի հարկէ, ոչ մի գին ունենալ բայց հոկտեմբերի 17-ը պահում է իր բարձր նշանակութիւնն իրեւ բանուոր դասի առաջին յաղթանակ, որ ձեռք է բերւած երկար տարիների յամառ կոիւներով: Այդ յաղթանակը ցոյց տևեց լինական սօցիալիստներին, որ ոռւս աշխատաւոր ժողովուրդը վերջապէս գիտակցել է իրան և իւր ուժը, և հէսց այդ պատճառով մօտ է այն օրը երբ հին ինքնակալ Ռուսաստանը գլուխ կը խոնարհի նոր և ազատ Ռուսաստանի առաջ: Եւ ժողովրդական այդպիսի ազատութեան ժամանակ Լեհաստանի անկախութեան պահանջը կարող էր սերմանել ազգային խոռվութիւն լին և ոռւս աշխատաւոր ժողովրդի մէջ. այդ խռովութիւնից կը շտապէր օգտւել բիւրօկրատիան, իսկ ազատութեան գործը դրանից միայն կը տուժեր: Այդ պատճառով էլ լինական սօցիալիստական կուսակցութիւնը հանեց իր ծրագրից Լեհաստանը Ռուսաստանից բաժանելու պահանջը: Ներկայումս նա բաւականանում է պահանջելով Լեհաստանի համար լայն շրջանային աւտօնոմիա: Միւս ազգութիւնների սօցիալիստական կուսակցութիւնները համանման ծրագրի ևն առաջադրում: Շրջանային աւտօնոմիան, կամ պետութեան դաշնակցական (Փեղերատիւ) կազմը ապահովում է արդեօք ազգութիւնների հասարութիւնը. այդ հարցի վերայ արժէ կանգ առնել:

Շատ յաճախ շրջանային աւտօնոմիայի և փեղերացիայի

(դաշնակցութեան) թէ կողմանակիցները և թէ հակառակորդները պարզ չեն ըմբռնում այդ տերմինների նշանակութիւնը: Օրինակ՝ Լեհաստանի աւտօնոմիա և լեհացիների աւտօնոմիա գործ են ածում իրեւ հաւասար հասկացողութիւններ. այն ինչ առաջինը նշանակում է տերրիտորիական (երկրի) աւտօնոմիա, իսկ երկրորդն—ազգային: Աւտօնոմիայի և ֆետերացիայի հակառակորդները երբեմն կարծում են, որ պետական այդ ձևերը համապատասխանում են անջատման (սեպարատիզմի) և ցոյց են տալիս աւտօնոմ և դաշնակցից մասերի թշնամական յարաբերութիւնները: Այդ պատճառով անհրաժաշտ է մի քանի խօսքով բացադրել ֆետերացիայի և աւտօնոմիայի էութիւնը:

Աւտօնոմիա նշանակում է ունենալ ինքնորոյն օրէնսդրութեան և ինքնավարութեան իրաւունք, որը սակայն սահմանափակում է կենդրոնական իշխանութեան իրաւունքով:

Այսեղ հետևապէս գործագրում է այն սկզբունքն թէ ընդհարումների գէպքում պետական իրաւունքը փոխարինում է տեղականին—das Reichsrecht bricht das Landesrecht: Աւտորիայում մենք ունենք աւանձին շրջանների աւտօնոմիա, այսպէս կոչւած արքայական հողերի: Այդ շրջաններն ունեն իրանց սէյմերը, որոնց իրաւասութեան մէջ է մտնում տեղական օրէնսդրութիւնը: Բայց շրջանային սէյմերի օրէնսդրական իրաւասութիւնները սահմանափակում են ընհանուր նօրմաներով, որոնց մշակում է պետութեան կենդրոնական օրէնսդրի օրգանը—Ռէյխսրատը: Ճշմարիտ է օրէնսդրական մի քանի շրջաններում սերմերը ունեն բացարձակ իրաւունք և այդ առանձնաշնորհումները, վաւերացրւած հիմնական օրէնքներով, չեն ենթարկում Ռէյխսրատի կամքին, և այդ հանգամանքը տալիս է Աւտորիային կօնֆեղերացիայի նմանութիւն, բայց և այդ գէպքում (բացի այն որ դոցա թիւը շատ քիչ է) սէյմերի իշխանութիւնը սահմանափակւած է կենդրոնականի իշխանութեամբ և այս գէպքում թագաւորի իշխանութեամբ, առանց որի վիրաւերացման սէյմերի օրինագծերը չեն կարող օրէնքի ուժ ստանալ: Տեղական օրէնսդրութեան ենթարկւելը կենդրոնականին, որին առաջինը չը պէտք է հակասի և կան օրէնսդրութեամբ, կազմում է աւտօնոմիայի էութիւնը, որով նա դաշնակցութեամբ է դաշնակցութիւնից (Փեղերացիայից):

Վերջինս ընդհառակը: Նշանակում է անկախ պետութիւնների միութիւն, ուր իրեւ հիմք գրւած է ազատ պայմանագիրը, և որտեղ կենդրոնական կառավարութեան յատկացրւած է առանձնապիչս որոշած իրաւասութիւններ: Օրէնսդրական և վարչական միւս բոլոր ասպարէզներում, որոնք չեն մտնում պայմանագրում յիշատակած դաշնակից իշխանութիւնների իրաւասութիւնների շրջանը, միութիւն կազմող պետութիւնները, իրանց վերապահում են անսահման բարձրագոյն իշխանութիւն: Այդպիսի ֆեղերատիւ միութեան տիպ ներկայացնում է Շվէցարիական հանրապետութիւնը, կամ Հիւսիսային Ամերիկայի Միացեալ Նահանգները: Այդպիսով եթէ աւտօնօմիայի դէպքում շրջանները նոյն իսկ իրանց ներքին օրէնսդրական ասպարէզում ազատ են այն չափով, ինչ չափով այդ թոյլադրւում է կենդրոնական իշխանութեան կողմից, ընդհակառակը ֆեղերացիայի ժամանակ դաշնակից իշխանութիւնների նմանօրինակ միջամտութիւնը միութիւն կազմող պետութիւնների, այսպէս կոչւած ընտանիկան գործերի մէջ, չի կարող տեղի ունենալ: Որովհետև դաշնակցութեան (ֆեղերացիայի) իրեւ հիմք ծառայում է ազատ համաձայնութիւնը, ուստի և ընդունւում է, որ միութիւն կազմող բոլոր անդամները վայելում են հաւասար իրաւունքներ: Ահա թէ ինչու չը նայելով Գերմանիան պաշտօնապէս դաշնակցութիւն է անւանում, բայց և այսպէս նա չի ներկայանում իրեւ մաքուր դաշնակցութիւն: Կայսերական իշխանութիւնների օրէնսդրական իրաւասութիւնները շատ լայն են, նոքա դուրս են դալիս այն հարցերի սահմաններից, որոնք ունեն ընդհանուր նշանակութիւն: Դեռ աւելի ևս սահմանագրութեան 19-րդ յօդւածի համաձայն, եթէ դաշնակցութիւն կազմող տէրութիւններից մէկը հրաժարւի կատարել կայսերութեան օրէնքը, այդ դէպքում նորան կը ստիպեն ընդունել այդ դաշնակցութեան էկզեկուցիայի միջոցով, այսինքն զինւած յարձակումով: Եթոյց, չի կարող խօսք լինել միացեալ տէրութիւնների հաւասարսթեան մասին, բանի որ Պրուսիան ուղարկում է Միացեալ Խորհրդին 17 լիազօր, իսկ մի Սակսէն-Վէյմար միայն մէկը: Գերմանական պետութեան մէջ մենք չենք տեսնում ֆեղերացիայի (դաշնակցութեան) հիմնական առանձնայատկութիւնները և այդ է պատճառը, որ պետական իրաւունքի հեղանակառ անձնաւորութիւնները տրամադրիր են գերմանական

պետութիւնը անւանել ոչ թէ պետութիւնների միութիւն: այլ միացեալ պետութիւն:

Աւտօնօմիաիր և ֆեղերացիայի վերը նկարագրած ընորոշումներից երեւում է, որ նրանց եղած դէպքում, մանաւանդ երկրորդի ժամանակ, առանձին շրջանների շահերի կարգաւորումը և բաւարարութիւնը յանձնեում է շահագըլթիւնը: Այն ինչ տեղի է ունենում մեզ մօտ Ռուգուածների ձեռքը: Այն ինչ տեղի է ունենում միութիւնը, ոտար ազգերի ճնշումն, ծայրագաւանների շահերի զոհաբերումը կենդրոնական Ռուսաստանին, այդ բոլորը տեղի չէին ունենայ, եթէ կեանքի մէջ իրականանար աւտօնօմիայի և դաշնակցութեան լայն սկզբունքները: Պարզ է այստեղից այդ հիմնարկութիւնների նշանակութիւնը դեմօկրատիկական սկզբունքների տեսակէտից: Կարևոր է նաև հետեւեալ հանգամանքը:

Իսկական դեմօկրատ կուսակցութիւնը չի կարող չի ձգտել աւտօնօմ-դաշնակցական կարգերի նաև այն պատճառով, որ այն դէպքում աւելի հեշտ է անցկացնել երկրում դիմօկրատիկ բէֆօրմիներ: Եթէ պետութեան մի որ և է շրջանը հասունացել է արմատական բէֆօրմիների համար, իսկ ինքը պետութիւնը ամբողջապէս վերցրած ո՛չ, այդպիսի դէպքում միայն դաշնակցական կամ ֆեղերատիւ կարգերի ժամանակ կարելի է մտցնել հասունացած շրջանում հարկաւոր բէֆօրմիները: Այսպէս օրինակ, Ամերիկական Մեծ Հանրապետութեան մի քանի նահանգներ իրականացրել են կանանց հաւասարութեան սկզբունքը, այն ինչ ամբողջ հասարակագետութիւնն ամբողջապէս վերցրած, գեռ չի հասունացել այդ բէֆօրմի համար: Որքան մեծ է պետութիւնն, այնքան ֆեղերատիւ բաժանմունքը նորա համար անհրաժեշտ է և արդիւնաւէտ, որովհետև մի կենդրոնից չի կարելի կառավարել ընդարձակ պետութիւնը, պետական կարիքները կենդրոնին երեք չեն լինի թանգ և նոյն իսկ հասկանալիք: Բայց և այնպէս անլուծելի է մընում այն հարցը, թէ ինչ չափով շրջանների աւտօնօմիան և ֆեղերացիան ապահովում են ազգերի ազատութիւնն և հաւասարութիւնը: Այդ հարցին պատասխանելու համար ամենից առաջ անհրաժեշտ է պարզել այն պատճառները, որոնց շնորհիւ մի երկրում, մի ազգութիւն հնարաւորութիւն է ստանում տիրապետելու միւս ազգութիւնների վերայ և ճնշելու նոցա: Մի ազգի

միւսին ճնշելը ի՞նչու համար չի վերանում դեմօկրատիկ-հանրապետութեան մէջ: Պատասխանը պարզ է. որովհետեւ պարլամենտում կը գերիշխեն տիրող ազգի ներկայացուցիչները. այն բոլոր դործերը, ուր կը նդարւեն երկու ազգութիւնների շահերը, այնպէս կը լուծւեն, ինչպէս դա ձեռնուու է տիրող ազգութեանը: Այդպիսով բոլոր ազգային շահերի վիճակը ամբողջապէս կը գտնւի տիրապետող ազգի ներկայացուցիչների ձեռքին: Քանի որ իր ազգային գործերի վերայ չի հսկի ինքը ազգը, անհաւասարութիւնը միշտ գոյութիւն կունենայ և փոքր ազգութիւնների շահերը դո՞ կը բերւեն մեծերի շահերին:

Տերիտորիալ աւտոնոմիայի կողմնակիցները մոռանում են, որ շրջանային աւտոնոմիան չի վերացնում այն պատճառները, որոնց չնորհեւ գերիշխող ազգը հնարաւորութիւն ունի ճնշելու միւս ազգութիւնները: Իւրաքանչիւր շրջանում մի որևէ է ազգութիւն թւով գերազանցում է միւսներին: Այդ ազգի ներկայացուցիչները աւտոնոմ սէյմում մեծամասնութիւն կը կազմեն և նոյնպէս կը ճնշեն միւս ազգութիւններին, ինչպէս որ կենդրոնական պարլամենտում մեծամասնութիւնը ճնշում էր փոքրամասնութեան:

Ի՞նչ կարող է տալ Լեհաստանի աւտոնոմիան նրա մէջ ապրադ ազգութիւններին. կապահովացնի արգեօք նա Լեհաստանի սահմաններում ապրող ազգութիւնների հաւասարութիւնը. Ո՞չ, որովհետեւ Լեհաստանի սէյմում լեհացիները մեծամասնութիւն կը կազմեն և Լեհաստանում ապրող բոլոր ազգութիւնների ազգային—կուլտուրական շահերի բաղդը կը գտնեի այդ մեծամասնութեան ձեռքին: Լեհական մեծամասնութիւնը անշուշտ, շատ զգայուն կը լինի դէպի լեհ ժողովրդի կարիքները, բայց միւս ազգերի՝ ոռուսների, հրէաների, գերմանացիների և միւսների շահերը չեն լինի և չեն էլ կարողնորան մօտ լինել, իսկ այն դէպքերում երբ այդ ազգութիւնների շահերը կը ընդհարւեն լեհերի շահերի հետ կասկած չը կայ, որ մեծամասնութիւնը սէյմում աշխառու կը լինի և կը լուծի հարցերը յօգուտ իւրաքինների: Բայց միւս կողմից չը պէտք է կարծել, որ լեհաստանն աւտոնոմիա ստանալով ամբողջ Ռուսաստանում ապրող լեհացիների ազգային պահանջները բաւարութիւն կը ստանան: Սմենեին ոչ եթէ լեհաստանի աւտոնոմիայի դէպքում լեհերը իրենց երկրի սահմաններում տիրող

ազգ կը լինեն, դրա փոխարէն լեհաստանից գուրս, օրինակ՝ Պրիբալտիան շրջանում, որտեղ նոքա փոքրամասնութիւն են կազմում, կը լինեն ճնշւած:

Աւելի ևս կնճռւած է կովկասի աւտոնոմիայի հարցը: Կովկասը չի ներկայանում իրբում միատարր շրջան: Կովկասում ապրող ազգութիւնները միմիանց բոլորովին նման չեն: Ի՞նչ ընդհանուր բան կայ վայրենի լեռնցի—ինգուշի կամ լեզու և վրացու կամ հայի մէջ: Աւելի քան սիալ կը լինի ենթադրել, որ շրջանային աւտոնոմիան բաւարար ձեռվ կը լուծի կովկասում ազգային հարցը: Աւտոնոմ կովկասում ազգային թշնամութիւնն աւելի ևս կը սրի և դուցէ, հայ-թուրքական կոտորածի վերայ կաւելանայ լեզուի-կազմակային, կամ այլ կոտորած:

Անդրկովկասում այդ բանը շատ լաւ են հասկանում և այդ պատճառով այնտեղ շատերը պահանջում են ոչ թէ կովկասի, այլ Անդրկովկասի աւտոնոմիա: Բայց Անդրկովկասում ազգային հարցի այդ ձեփի լուծումն էլ նոյնպէս պէտք է անրաւարսը համարել: Անդրկովկասի սէյմում գերիշխող կը լինեն թուրքերը, սակայն ոչ կարող է կասկածել ու հայերի և վրացիների կուլտուրական պահանջները չեն կարող պաշտպանութիւն գտնել թուրք ներկայացուցիչների կողմից: Նոցա նոյն իսկ հասկանալի չեն լինի լինի այդ պահանջները: Այն ինչ հայերի և վրացիների ազգային հարցերի բաղդը այնտեղ ամբողջապէս նոցանից կը լինի կախւած, որովհետեւ սէյմում նոքա մեծամասնութիւն կը կազմեն:

Վրացի աւտոնոմիստները, ի նկատի ունենալով այն փաստը, որ համարենա, ամբողջ Վրաստանը բնակւած է վրացիներով և վրացիները կուլտուրապէս Անդրկովկասի միւս ազգութիւններից առաջ են ընկել, պահանջում են Վրաստանի համար աւտոնոմիա, բայց չէ որ զբանով պատկերը միայն արտաքուստ է փոխուում: Վրացի աւտոնոմ սէյմում կը գերիշխեն վրացի ներկայացուցիչները, իսկ ի՞նչ պէտք է անեն ոռուսները, հայերը, թուրքերը և լեռնական ցեղերը: Նոցա ազգային կարիքների բաղդը ամբողջապէս կախւած կը լինի վրացի մեծամասնութեան բարեկամքից: Բայց մենք, որ չենք հաւատում կենդրոնական պարլարապից, մենք ստուգում մեծամասնութեան «բարի կամքին», տրամաբանորէն մը մենտի մեծամասնութեան 61413-67



տածելով, նոյն բանին չը պէտք է հաւատանք նաև այստեղ աւտօնոմ սէյսում:

Հարկաւոր է այստեղ նկատել, որ շատ յաճախ առանձին աղգութիւնները իրանց ազգի համար աւտօնոմեան պահանջելով ձըդտում են ոչ միայն իրանց ազգի ազատութեան, այլ և գերիշխանութեան աւելի փոքրիկ ազգութիւնների վրայ: Այդպիսի թագուած ցանկութիւնների գեղեցիկ օրինակ ներկայացնում է Աւտորեան. այստեղ իւրաքանչիւր ազգութիւն կուռում էր իր ազատութեան համար, բայց միենոյն ժամանակ իր երկրում ճնշում էր միւս ազգութիւններին:

Աւելի նշանաւոր է այն, որ Վրաստանի աւտօնոմիայով ինքը վրացի ազգը ազատ կուլտուրական զարգացման հնարաւորութիւն չի ստանայ. Վրաստանից դուրս ապրող վրացինները միշտ պէտք է զգան ազգային ճնշումն: Ո՞վ պէտք է ուշադրութիւն դարցնի Բագուի, Օգեստայի և այլ տեղերի վրացինների կուլտուրական պահանջներին: Եթէ նոյց մէջ զարգացած է ազգային ինքնասիրութիւնը, եթէ նոքա ցանկանում են ապրել ազգային կեանքով, պէտք է վերադառնան Վրաստան, որովհետեւ աւտօնոմ Վրաստանից դուրս նոյց ազգային-կուլտուրական պահանջները բաւարարութիւն չեն ստանայ: Որ և է ճնշումն գործ դնել միւս աւտօնոմ սէյմերի վրայ չեն կարողանայ, որովհետեւ Վրաստանից դուրս նոքա չունեն ոչ մի դրական ուժ:

Այդպիսով եթէ Ռուսաստանը ամենալայն շրջանային աւտօնոմիայով և դաշնակցական կապերով միացած տէրութեան վերափոխի, այդ գէպքումն էլ չի լինի ազգերի հաւասարութիւն, և չի վերջանայ մի ազգի տիրապետութիւնը միւսի վրայ, և հետևապէս, և այն ժամանակ ոչ մի ազգ հնարաւորութիւն չի ունենայ լայն բացելու իր ընդունակութիւնները և ազատ բաւարարութիւն տալու իւր կուլտուրական ազգային պահանջներին: Ամեն մի ազգ, որ ունի տերըիտօրեա (երկիր), իր տերըիտօրիայի սահմաններում կը գերիշխէ, բայց այդ ազգի այն մասը, որ ապրում է միւս շրջաններում կը ճնշւի, որովհետեւ այնտեղ նոքա փոքրամասնութիւն կը կազմեն: Իսկ այնպիսի ազգերին, որոնք ոչ մի տերըիտօրիա չունեն, օրին. հրէաները և հայերը, շրջանային աւտօնոմեան ոչ մի դրական օգուտ չի տայ: Նոյց ամեն տեղ և ամեն

աւտօնոմ շրջանում կը ճնշեն, որովհետեւ նոքա ամեն տեղ փոքրամասնութիւն կը կազմեն:

Շրջանային աւտօնոմեան չապահովելով առանձին աղգութիւնների շահերը, ունի նաև այլ վնասակար կողմ: Աւտօնոմ սէյսում կը զգացւի անվերջ ազգային խոռվութիւն, սէյմը կը դառնայ ազգային ընդհարումների բեմ և դա կը խանգարի երկրի կուլտուրական զարգացմանը: Ազգային այդպիսի հակառակութիւններից պէտք է վախենան մանաւանդ նոքա, որոնք դաւանում են սօցիալիզմի վարդապետութիւնը:

Առանձին ազգութիւնների միջի կոիւը և թշնամութիւնը մշտապէս ուշացրել են զասակարգային կուի գիտակցութիւնը այն դասի մէջ, որը կոչւած է կեանքից տապակելու բուրժուական կարգերը և հաստատելու երկրի վրայ ազատութեան և հաւասարութեան թագաւորութիւն: Սօցիալիստները այնպէս պէտք է լուծեն ազգային հարցը, որ չը լինի ոչ գերիշխող և ոչ ճնշող աղգութիւն, որովհետեւ միմիայն այդպիսի լուծումը կարող է համապատասխանել ժողովրդի աշխատաւոր խաւերի շահերին: Ազատութեան և հաւասարութեան դէպքում միայն հնարաւոր է տարբեր ազգերի խաղաղ և եզրայրական կենակցութիւնը: Միայն այդ գէպքում զանազան ազգութիւնների բանւորութիւնը, մոռանալով, ազգային թշնամութիւնը, կը միանան մի մեծ և ահարկու սօցիալիստական բանակում:

### III

Եթէ ես աշխատեցի ապացուցել, որ ոչ շրջանային աւտօնոմեան, ոչ պետութեան դաշնակցական կամ ֆեդերատիւ կազմը չեն կարող ապահովել ազգերի հաւասարութիւնը. սակայն գըրանից ամեններն չի հետևում, որ բոլորովին չը պէտք է ձգտել ոչ աւտօնոմիայի և ոչ ֆեդերացիայի: Ես արդէն ասեցի, որ պետութեան դաշնակցական կազմի պահանջը բղխում է օրէսպիրի իշխանութեան ապակենդրունացման անհրաժեշտութիւնից: Ֆեդերատիւ պետութեան մէջ աւելի հեշտ է անցկացնել դեմօկրատիկ բեֆօրմներ և այդ պատճառով պրօլետարիատը և աշխատաւոր գիւղացիութիւնը պէտքէ ձգտեն այդպիսի կազմի:

Եթէ ամբողջ Ռուսաց պետութեան մէջ, սկսած ձափոնական

ծովից մինչև Գէրմանիայի սահմաները և Սպիտակ ծովից մինչև  
Արաքսի ափերը բնակաւէր միմիայն մի ազգութիւն, այդ գէպ-  
քումն էլ գիտակից աշխատաւոր ժողովուրդը առանձին շրջաննե-  
րի համար աւտօնօմիա կը պահանջէր:

Պետութիւնը աւատօնօմ շրջանների բաժանելիս պէտքէ գլխաւորապէս հաշւի առնել ոչ այն, թէ ի՞նչ ազգութիւն է ապրում այդ հողի վրայ, այլ, ներկայացնում է արդեօք այդ շրջանը կուլտուրական և տնտեսական տեսակէտից մի ամբողջութիւն։ Եթէ մի շրջանում ապրում են զանազան ազգութիւններ, բայց տնտեսական և կուլտուրական տեսակետից նա մի ամբողջութիւն է կազմում, այդպիսի շրջանին պէտք է տալ աւատօնօմեաւ։

Եւ այդպէս՝ օրէնսդիր իշխանութեան լայն ապակենդրոնացում, շըջանների և համայնքի ինչպէս քաղաքի ու գիւղի, լայն աւտօնօմիա, հնարաւոր չափով մօտեցումն Փեղերատիւ (գանձակցական) կարգերի, այս բոլորը այնպիսի պահանջներ են, որոնց աշխատաւոր ժողովրդի շահերի տեսակէտից պէտք է առաջադրել և նոցա իրականացնելու համար կուել։ Սակայն բոլոր այդ գեղեցիկ ըեփօրմները, ինչպէս արդէն վերը ապացուցեց, չեն կարող ապահովել ազգերի հաւասարութիւնը։ Մենք արդէն տեսանք, որ տիրապետող և ճնշուղ ազգերի գոյութեան հնարաւորութիւնը պայմանաւորում է նրանով, որ ինքը ազգը չի կառավարում իր բոլոր կուլտուրական գործերը։ Ազգային շահերի բաղը ինքնակալ պետութեան մէջ գտնւած է բիւրօկրատիայի ձեռքին, կենդրոնական սահմանադրական, կամ պարլամենտական երկրներում պարլամենտի մեծամասնութեան, իսկ գանձակցական պետութեան մէջ, առանձին սէրմերի մեծամասնութեան ձեռքին։ Բոլոր դէպքերումն էլ մեծամասնութիւնը կը պատկանէ մի որ և է ազգութեան և այդ հանգամանքը ապահովում է նորա գերիշխանութիւնը միւս ազգերի վերայ։

Հապալ, Բնչչպէս իրականացնել ազգերի հաւասարութիւնը, Բնչչպէս անել, որ ինքնորոշման իրաւունքը գոյութիւն չունենայ միայն հիմնական օրէնքների թղթերի մէջ, այլ և իսկապէս կեանքի մէջ իրականութիւն դառնայ: Հարցը երկու մասի է բաժանում, Առաջին պէտքէ որոշել, թէ Բնչումն է կայանում այդ ինքնորոշումը, կամ այլապէս ասած, Բնչ իրաւունքներ պէտք է ապահովել ազգերի համար: Երկրորդ հվատքը է իրականացնի այդ ի-

ըստունքները, այսինքն ովկ է ներկայանում ազգային իրաւունքների ամենը:

Ի՞նչ հպատակի ենք ձգում մենք ազգային հարցը վճռլիս:  
Միմիայն և բացառապէս՝ մարդու խզի և հոգեկան ինքնորոշման  
գէմ եղած բոլոր ճնշումների և բռնաբարութիւնների ոչնչացումն,  
անձի ազատութեան ապահովացում, թէ առօնձին քաղաքացու  
համար և թէ խմբակների, ազատութիւն, որ վերջանում է միայն  
այնուել, ուր սկսում է ուրիշի ազատութիւնը: Եթէ մենք ասում  
ենք, որ չի կարելի բաւականանալ ինքնորոշման իրաւունքի միայն  
լոկ արձանագրութեամբ և պահանջում ենք մատնացոյց անել այն  
դրական միջոցները, որոնցով ապօնոված կը լինեմ այդ իրաւունք-  
ները, չէ որ մենք միւս բոլոր գէպերումն էլ ձգտում ենք դրա-  
կան միջոցներով ապահովել անհատի իրաւունքները (բնակարանի  
անձեռնմխելութիւն, պաշտօնեաների դատի ենթարկելը, ևայլն):  
Դրանից ամեննեին չի հետեւում, որ սօցիալիստ կուսակցութիւններ  
ըլլ իրանց ինդիբների մէջ պէտքէ մտցնեն նաև ստեղծագործող  
մասնակցութիւն ազգային հարցի զարգացման համար: Եւ այդ  
տեսակէտից չարաշար սխալում է Խ. Ժիտլօվսկին, երբ «Սօցիա-  
լիզմը և Ազգային հարցը» իր բրոշուրում (որ սկզբում տպւած էր  
Բրիւնների համաժողովը կայանալուց առաջ Աւատրիսյի սօցիա-  
լիստների մէջ սլրովագանդա մղելու նպատակով) հաւանութեամբ  
առաջ է բերում Բրանդէնի խօսքերը. «Մեզ վերայ (այսինքն Դա-  
նիացիների վերա, բայց դա ճշմարտութիւն է բոլոր ազգերի  
համար) ընկնում է ազգային պարտք պաշտպանելու մեր լեզուն,  
և մեր ձեռքը եղած բոլոր միջոցներով աշխատելս որ այդ լեզուն  
մի մատնաշափ անգամ չի կորցնի իր տերրիտորիայից», և իր  
կողմից սօցիալիստ կուսակցութիւննորին առաջարկում է «ժողո-  
վրդական լեզվի վերածնութեան համար առաջ բերել ազգային  
շարժումն. և այդ նոր դրօշակը տալ հէնց այն աշխատաւոր մաս-  
շարժումն. և այդ նոր դրօշակը տալ հէնց այն աշխատաւոր մաս-  
շարժումն. որի շահերի համար նոքա աշխատում են» (երես  
76—77): Սոյնանման ինդիբները սօցիալիզմի հետ ոչ մի ընդհա-  
նուր բան չունեն: Եթէ այդ տեսակ ազգային հարցի վերածնու-  
թեան ձգումն գոյութիւն ունի, մենք պարտաւոր ենք նորա ա-  
զատ զարգացումը իրագործումն ապահովել բայց ոչ երբէք այդ  
ձգումն առաջ բերել և նորա առաջ բերելում մասնակցութիւն  
ունենալ: Դա, ինչպէս և կրօնը իւրաքանչիւրի անձնական գործն

է: Մենք ամենսկին չենք կարծում, որ «Ազատութեան թագաւորութիմն նշանակում է ազգային թագաւորութիմն» (նոյն տեղ երես 66) և եթէ ազգերի հոգեկան ազատ զարգացումն ընթանար ոչ թէ ազգային կուլտուրայի ուղիով, այլ ուրիշ ճանապարհով, ոչ սօցիալիզմի գործը և ոչ էլ մարդկութեան շահերը դրանից ուշնչ չէին կորցնի:

Եւ այդպէս ազգային խնդրում մենք աշխատում ենք ապահովել ազատութեան շահերը: Երբ կիրականան սօցիալիստական կուսակցութիւնների ընդհանուր դեմօկրատիկական պահանջները և մանաւանդ բոլոր քաղաքացիների հաւասարութիւնը, այն դէպում կ'ոչնչանան ազգային ճնշման այն բոլոր ձեռերը, երբ առանձին անհատ քաղաքացու իրաւունքները տուժում են միայն այն պատճառով, որ նա այս կամ այն ազգին է պատկանում: Անապահով կարող են մնալ միայն ազգային—կուլտուրական կարիքները, որովհետեւ գերիշխող ազգութիւնները օգտւելով օրէնսդիր հիմնարկութիւնների մէջ (սէյմերում կամ պարլամենտում) իրանց մեծամասնութիւնից, կարող են արհամարել իրանց համար օտար և փոքրամասնութիւն կազմող ազգութիւնների կուլտուրական շահերը և այդպիսով ճնշել նոցա: Աւստրիացի, ազգային հարցի քննադատ Ռուդոլֆ Շպրինգերը, ի շարս այլ ազգային իրաւունքների անհրաժեշտ է համարում տալ ազգին իրարաւունք աստիճանաւորներ նշանակելու: «Իւրաքանչիւր մի ազգ ցանկանում է կառավարել իր ազգակիցներով, նա մերժում է ուրիշների գերիշխանութիւնը»: Շպրինգերը այդ դէպքում աչքի առաջ ունի միայն Աւստրիայի իրականութիւնը, որտեղ պաշտօնեաների նշանակելը կազմում է գահի իրաւունքն և նա պահանջում է ազգի մասնակցութիւնն այդ իրաւունքի մէջ: Իսկ եթէ մի կողմից ընդունենք, որ լայն կերպով կիրականան դեմօկրատիկական կարգերը, նոյն իսկ դեմօկրատական հանրապետութիւնը, աւտօնօմիայի և ֆեդերացիայի (դաշնակցութեան) սկզբունքերով, ուր կիրականանայ քաղաքացիների իսկական հաւասարութիւնը, հնարաւոր կը լինի ընտրել, փոփոխել և դատել բոլոր պետական պաշտօնեաներին, և ամեն մէկը իրաւունք կունենայ օգտւելու իր մայրենի լեզով բոլոր տեղական, հասարակական և պետական հիմնարկութիւններում, իսկ միւս կողմից այն շրջանը ուր հնարաւոր է ազգութեան ճնշումն, այսինքն կուլտուրական շահերի շրջանը, ամբողջապէս կուլտուրական շահերի շրջանը, ամբողջապէս կը գտնել:

Իւր ձեռքում, այն ժամանակ ազգի մասնակցելու իրաւունքն աստիճանաւորներ նշանակելու հարցում, կորցնում է իր ամբողջ նշանակութիւնը:

Շպրինգերը, նրա հետ միասին և Ռուսաստանի Հրէական Սօցիալիստական կուսակցութիւնը առաջադրում են իրեւ իրական պահանջ—ազգի իրաւունքը տերրիտորիա (երկիր) ունենալու: Բայց քանի որ մենք ընդհանրապէս աւտօնօմ—ֆեդերատիւ կարգերի ենք ձգտում, էլ հիմք չունենք անպատճառ ամեն մի ազգութեան համար առանձին տերրիտորիա ձեռք բերելու: Այն շրջաններում ուր մի որ և է ազգ շատ մեծ թիւ կը կազմի, այստեղ միացած կը լինեն տերրիտորիական և ազգային աւտօնօմիաները, այսինքն բացի առանձին ազգային սէյմից, այդ ազգը, բոլորովին պատահամամբ, կունենայ նաև իր տերրիտորիան, որին ձգտում է օրինակ ժիկովսկին, բայց որը մենք բոլորովին անհրաժեշտ չենք համարում մտցնել մեր պահանջների մէջ: Միւս բոլոր դէպքերում մեզ համար կարեոր է հոգալ ոչ թէ ազգային տերրիտորիալ աւտօնօմիայի մասին, այլ որ ապահոված լինեն որոշ շրջաններում փոքրամասնութիւն կազմող ազգերի կուլտուրական պահանջները:

Մենք որոշեցինք այդպիսով, թէ ազգի ո՞ր իրաւունքները պէտք է առանձնապէս ապահովիել, դոքա—ազգային-կուլտուրական իրաւունքներն են:

Ո՞վ է ներկայանում ազգային իրաւունքների տէրը: Այստեղ պէտքէ անցկացնել այն սկզբունքը, թէ շահերի կարգաւորումն և բաւարարութիւն տալը պէտք է յանձնել հէսց իրեն շահագրգուած կողմին: Բաւական չի որոշել, որ ամեն մարդ իրաւունք ունի իր մայրենի լեզով կրթութիւն ստանալու: Այդ տեսակ օրէնքը, անկասկած, կը յատկացնէր վարչական մարմնին (օրինակ լուսաւորութեան մինիստրութեան, կամ ինքնավար մարմիններին). որոշ իրաւասութիւններ նորան իրականացնելու համար, բայց զրանով երախաւորութիւն չէր տայ, որ այդ օրէնքը անպատճառ կիրագործւի: Եւ իսկապէս, այն ժամանակ միայն ազգը կարող է իր ազգային—կուլտուրական շահերի բաւարար լուծում ապահոված համարել, երբ այդ գործով կը զբաղւի ինքը ազգը: Բայց ինչ է ազգը: Ոչ մարդաբանութեամբ և ոչ էլ մի այլ գիտական միջոցով այդ հասկացողութիւնն աւելի ուղիղ որոշելու հնարաւոր թիւն չը կայ: Ժամանակակից ոչ մի ազգութեան համար չենք

կարող ցոյց տալ ոչ ազգային, ոչ պատմական տրադիցիաների, ոչ լեզվի ու կուլտուրայի մի ընդհանուր ծագումն։ Բայց և այնպէս ազգային կուլտուրական կարիքներին բաւարարութիւն տալու պահանջը գոյութիւն ունի։ Միայն այդ հանգամանքը մենք պէտք հաշվի առնենք և այդ պատճառով նոցա պէտք է ազգի անդամ համարենք, որոնք իրանք իրանց, ազգի անդամ են համարում, և որոնք ուրիշների հետ միասին ունեն լեզվի, գրականութեան և ուրիշ ազգային ստեղծագործական կողմերի ընդհանուր կուլտուրական—ազգային շահեր։ Իրանց իրաւունքից օգտաելու համար ազգերը պէտք է կազմակերպւած լինեն. ազգային-կուլտուրական պահանջների բաւարար լուծումը վերահսկելու համար նոքա պէտք է ունենան իրանց ներկայացուցչական հիմնարկութիւնները, ազգային սէյմերը։

Եւ այդպէս ազգային իրաւունքների տէրերը ներկայանում են հէնց իրանք ազգերը, այսինքն այն բոլոր քաղաքացիները, որոնք իրանց համարում են որոշ ազգի անդամ, և իրանց ներկայացուցչական հաստատութիւնների միջոցով, կազմակերպւած են ազգային—կուլտուրական կարիքներին բաւարարութիւն տալու համար։ Ազգային հարցին ուղիղ այդ տեսակ լուծում տալիս է սօցիալիստ յեղափոխականների կուսակցութիւնը \*):

«Խառն ազգաբնակութիւն ունեցող շրջաններում, առաջ է կուսակցութեան ծրագրում, ընդհանուր բիւգչէի (եկամուտի) կուլտուրական-լուսաւորութեան համար յատկացրած բաժնից իւրաքանչիւր ազգ իրաւունք ունի իր բաժինը ստանալու ըստ իր թւի համեմատութեան և վարելու այդ գումարի հետ համաձայն ինքնավարութեան սկզբունքների»։ Պարզենք ծրագրի այդ կէտը։ Մենք զիտենք, որ իշխանութիւնները ժողովրդից տուրքեր են ժողովում։ Այդ փողերի մի մասը զնում են կուլտուրական-լուսաւորութեան նպատակների Ահա այդ մասը, եթէ սօցիալիստյեղափոխականների ծրագիրը իրականանայ, շրջանային սէյմը պարտաւոր կը լինի բաժանել բոլոր ազգութիւնների մէջ, որոնք ապրում են այդ շրջանում, համեմատ նոցա թւի։ Ամեն ազգութիւն, ստանալով իր իրաւացի բաժինը կը գործադրի

\* ) Հրէական Բաւնդը վաղուց արդէն քարոզել է ինդրի այդ ձևի լուծման անհրաժեշտութիւնը, բայց առաջադրելով ազգային—կուլտուրական աւտոնոմարյի պահանջը, ցաւօք սրտի Բունալը ոչ մի նշանակութիւն չի տալիս շրջանային աւտոնոմիային և ֆեղերացիային, նոյն իսկ դէմ է այդ պահանջներին։

նրան այնպէս ինչպէս ինքը կը ցանկանայ։ Նա կունենայ իր առանձին ազգային—կուլտուրական հաստատութիւնը, որն և կը զեկավարի ազգի ազգային-կուլտուրական գործերը եթէ այդ ազգի մի քանի մասերը ապրում են ուրիշ շրջաններում նոքա այնտեղ էլ կստանան իրանց բաժինը։ Այն ժամանակ ազգի մի մասը կը միանայ միւսի, միւսը երրորդի հետ և այսպիսով մի այսպիսի պատկեր կստացւի. բոլոր ազգերը Ռուսաստանի ամրող տարածութեան վերաբերյալ, միացած կը լինեն իրանց ազգային հաստատութիւններով. իւրաքանչիւր մի ազգ կունենայ իր սեփական ազգային սէյմը, որն և կը զեկավարի իւր ազգի կուլտուրական կեանքը։ Հարցը այսպէս վճռելու դէպքում ազգային ատելութիւնը, ոչ կենդրուսական պարլամենտում և ոչ էլ, տեղական սէյմերում իւր համար հող չի ունենայ, որովհետեւ ազգային կուլտուրական հարցերը այդ վարչական օրգաններից գուրս կը լինեն և կը գըտնեն բացառապէս իրանց ազգերի ձեռքին։ Ազգային սէյմը մի որեւէ տերրիտորիա չի ունենայ աչքի առաջ, այլ կը զեկավարի իր ազգի ընդհանուր կուլտուրական պահանջներով. կը մտցնի այս կամ այն ազգային հաստատութիւնն այնտեղ, որտեղ նրա կարութեան վերաբերյալ, այդէ այն փողն, որ ազգը կը ստանայ բաւական չի լինի, այն ժամանակ նա կարող է իր վերաբերյալ տուրք նշանակել։

Սյս ձևով հարցը լուծելու դէպքում դաշնակց-աւտօնօմ շրջանների հետ միասին, առաջ կը գայ նաև ազգերի դաշնակցութիւն կուլտուրական շահերի հողի վերաբերյալ։ Եթէ առաջ հնարաւոր էր, որ պարլամենտում կամ սէյմում բուրժուան և բանուրը ազգային շահերով միացած գուրս գային միւս ազգութեան բուրժուայի և բանուրի դէմ, սօցիալիստ յեղափոխականների ծրագիրըն իրականալուց յետոց, այդպիսի բան այլևս չի կարող տեղի ունենալ, որովհետեւ վերջին դէպքում պարլամենտն և սէյմը ազգային ընդրաբումների բէմ լինելուց կը դադարէն։ Երբ կոչնչանան ազգային ճնշումները և կիրականանայ ազգերի հաւասարութիւնը դասակարգային շահերի հակասութիւնները ամեն ազգի մէջ շատ պայծառ գոյներով երեան կը գան և մենք պարլամենտում կը տեսնենք ոչ թէ մի ազգի բանուրի և բուրժուայի միութիւն ընդէմ միւս ազգի բանուրի և բուրժուայի, այլ բոլոր ազգութիւնների բանուրների միութիւն ընդէմ բորլոր ազգերի բուրժուաների։ Պարլամենտանենը կը դառնան մաքուր դասարդա-

յին կուի բէմ: Այս բոլոր հանգամանքներն ի նկատի ունենալով սօցիալիստ-յեղափոխականները ձգուում են վերացնելով ազգային ձնշումները իրականացնել ազգերի հաւասարութիւնը, իրանց սօցիալիստական դրօշակի վերայ նոքա գրում են. շրջանների համար լայն աւտօնօմիա, իսկ ազգութիւններին ընդարձակ կուշուուրական աւտօնօմիա:

Վերջաբանում հարկաւոր է նկատել, որ Արևմտեան եւրոպայի շատ նշանաւոր սօցիալիստներ ազգային հարցը վերը յիշած ձեռվ են լուծում: Աւստրիական սօցիալ-գեմօկրատիան պահանջում է ազգութիւնների աւտօնօմիա անկախ տերիտորիայից (Երկրից): Գերմանացի յայտնի սօցիալիստ կարլ կառուցկու կարծիքով ազգային հարցի միայն այս ձեր լուծումն է ձեռնոտու բանտորների համար: Աւստրիան դրա համար է կուտառութայով յետ մնացել միւս եւրոպական երկրներից, որ այստեղ զանազան ազգութիւններ յամառ կոիւ են մղում: Ազգային այդ վէճերը դանդաղեցնում են բանտորների դասակարգային գիտակցութեան զարգացումը և այդ պատճառով Աւստրիայի սօցիալիստները իրենց երկրում ցանկանում են ձեռք բերել ազգերի հաւասարութիւն, բայց Երբ կարելի է դրան համար կառուցկին այսպէս է պատասխանում՝ միայն ազգութիւնների դաշնակցութեան (Փետերացիայի) ժամանակ. «Թող կորչի, բացականչում է նա, ամբողջ ֆեոդալական անպէտք պետական իրաւունքը, որ գեռ մինչեւ այժմ անհնար պայմանների մէջ է դնում ազգային շարժումները, հեռող տերրետորիական բաժանումները, որոնք ջլատում են ազգը, թող կորչին, բոլոր սահմանները, որոնք կաշկանդում են զանազան ազգութիւններին և ազգային թշնամութիւն ու ատելութիւն են առաջացնում, այն ինչ նոցա (ազգերի) միահամուռ աշխատանքը շնորհիւ փոխադարձ ազատութեան և հաւասարութեան, Աւստրիային առաջին կուտուրական երկիրներից մէկը կը դարձնէին, իսկ այդ թշնամութիւնն այժմ խոչնդու է հանգիստուց ամեն մի պրօգրեսի\*):

\*) Մանօթ. ինչպէս տեսանք կառուցկին և Աւստրիական սօցիալ-գեմօկրատները ազգային հարցը լուծում են անկախ տերրետորիայից. բայց այդ չի նշանակում, որ նոքա մերժում են շրջանային աւտօնօմիան: Նոքա միայն բաժանում են շրջանների հարցը ազգայինից և վերջինս լուծում են առաջինից անկախ:

Թէ որքան խոր է ըմբռնում կառուցկին ազգային հարցը երեսում է նորա հետեւալ խօսքերից, «բանւոր դասակարգը կարիք է զգում լուծելու ազգային հարցը, որովհետեւ երբ պետութիւնների և երկիրների թագաւարութիւնը կը փոխարինւի ազգութիւնների թագաւարութեամբ, որոնք իրար կողքի կապը են աւտօնօմ կերպով և միասին կաշխատեն, միայն այն գէպքում պրօլետարիատի (ես կասէի աշխատաւոր ժողովրդի Շ. Գ.) դասակարգային կափւը կարտայայտուի իւր անխառն ձեռվ: Աղջի ինքնուրոյնութիւնն ներկայանում է մի բնական և անհրաժեշտ նախապայման բոլոր ժամանակակից դասակարգային կոիւների համար: Ժողովուրդն ամեն աեսակէտից պէտք է ազատ լինի, միայն այն ժամանակ բանւոր դասը դուրս կը գայ իր սօցիալական թշնամու գէմ իւր բոլոր զէնքերով: Բանւոր դասակարգը իր նօրմալ և բազմակողմանի զարգացման համար կարիք ունի իր ազգի անկախութեան ոչ պակաս քանի ընդհանուր ընտրողական իրաւունքը եւ խօսքի ու մամուլի պատութիւնը»: Ահա իրաւացի և խորհմաստ խօսքեր: Խուսաստանի սօցիալ-գեմօկրատներին խորհուրդ ենք տալիս լաւ ըմբռնել այդ խօսքերի նշանակութիւնը: Եթէ ոչ սօցիալ-յեղափոխականները, գոնէ այնպիսի յայտնի մարքսիստներ, ինչպիսին է կառուցկին, կը սովորեցնեն նոցա լուրջ վերաբերել ազգային հարցին: Գուզէ այն ժամանակ նոքա կը հասկանան ամբողջ անբաւարարութիւնը կուսակցութեան «սկզբուքային յայտարարութեան» թէ սօցիալ-գեմօկրատիան ազգերի ինքնառողշման կողմնակից է և հակառակ է ազգային ձնշման: Հմբռնելով թէ որքան անհրաժեշտ է բանւոր դասի համար ազգային հարցի կարգաւորումը, գուցէ, ինքնուրոշումն մշուշային փրազի փոխարէն կը մշակեն վերջապէս մի որոշ և պարզ ծրագիր:

Իւրաքանչիւր մի սօցիալիստական կուսակցութեան համար ներկայանում է մի անմիջական անհրաժեշտութիւն զիմել այդ բարդ հարցի լուրջ և բազմակողմանի ուսումնասիրութեան: Ներկայ յօղւածի նպատակն էր ցոյց տալ այդ հարցի ամբողջ կարևորութիւնը:

Թարգ. Գր. Աղ...ն



ՀԱՅ-ՀԱՅ, ՀԱՅ

Ա. ՄԱՅԻՆԻՔԻ

Ա. ՄԱՅԻՆԻՔԻ

ՀՀ Ազգային գրադարան



NL0194214

